ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղ համայնք, ՀՀ, Լոռու մարզ, ք.Շամլուղ, 2-րդ փող. շենք 9

☎(0253)60474, shamlugh.lori@mta.gov.am
shamlugh@mail.ru

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

N 51
16.02. 2017թ.

Հարգելի պարոն Նալբանդյան

Ներկայացնում ենք Շամլուղ համայնքի ավագանու թիվ 03, թիվ 04-Ն և թիվ 05-Ն որոշումները՝ համապատասխան հավելվածներով.

Առդիր 7 թերթ:

17.02.2017

X _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԲԵԺԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Շամլուղ, (0253)60474, shamlugh@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 03

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին,» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Շամլուղ համայնքի ավագանու 2017թվականի փետրվարի 10-ի հերթական նիստի օրակարգը

1. ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի "ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ" ԹԻՎ 29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. <<ԱԽԹԱԼԱՅԻ ԼՀԿ>>ՓԲԸ-ԻՆ ՇԱՄԼՈՒՂԻ ՊՂՆՁԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԱԲՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
4. ՇԱԽԿՅԱՆ ԱՆՈՒՇ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՆԴՐՈՒՇ ԲԵԺԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Շամլուղ, (0253)60474, shamlugh@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 04-Ն

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Շամլուղ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԱԲՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
4. ՇԱԽԿՅԱՆ ԱՆՈՒՇ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՆԴՐՈՒՇ ԲԵԺԱՆՅԱՆ

Հավելված
Շամլուղ համայնքի ավագանու 2017թ.
փետրվարի 10-ի թիվ 04-Ն որոշման

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի բյուջեի կատարողականը համեմատելով 2015 թվականի կատարողականի նկատմամբ աճ է գրանցվել: Եթե 2015թ.այն կազմել էր 94.4 տոկոս,ապա 2016թ. կատարողականը կազմել է 100.1

Շամլուղ համայնքի 2016 թվականի բյուջեի տարեկան կատարողականը եկամուտների գծով կազմել է 20735.6 հազ. դրամ ,այն նախատեսված է եղել 20727.0 հազ.դրամ,կատարման տոկոսը կազմել է 100.0:

Սեփական եկամուտները կատարվել են 5909.2 հազ. դրամով, նախատեսված 5900.6 հազ. դրամի դիմաց այն կատարվել է 100.1 տոկոսով:

ՄՈՒՏՔԵՐ

Ներկայացնենք մուտքերն ըստ եկամտատեսակների

2016 թվականի բյուջեի վարչական մասի եկամուտը կազմել է 20735.6 հազ.դրամ այդ թվում՝

1) Հողի հարկ

Հողի հարկը համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար պլանով նախատեսված է եղել 238.1հազ.դրամ, այն կատարվել 239.8հազ.դրամով,կատարողականը կազմել է 100.7%

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և կառույցների համար կատարվել է 154.4 հազ. դրամով,այն նապատեսված է եղել 189.5 հազ.դրամ,կատարվել է 81.4 տոկոսով:Գույքահարկը փոխադրամիջոցների համար կատարվել է 1226.4 հազ. դրամով, պլանով նախատեսված է 1136.4 հազ.դրամի դիմաց,կատարման տոկոսը կազմել է 107.9

3) Տեղական տուրքեր

Ծխախոտի և ոգեիլից խմիչքների վաճառքի թույլտվության համար նախատեսված 40.0հազ.դրամը հավաքագրվել է ամբողջությամբ

4) Հողի վարձավճար

Հողի համար վարձավճարը փաստացի կազմել է 4248.6 հազ.դրամ,պլանով նախատեսված է եղել 4246.6 հազ.դրամ,կատարվել է 100.0 տոկոսով:

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերենտներ

Պետական բյուջեից տրամադրվող դոտացիան տրվել է ամբողջությամբ ՝այն նախատեսված է եղել 14826.4 հազ. դրամ :

ԾԱԽՍԵՐ՝

Բյուջեի վարչական մասի ծախսը՝

Բյուջեի վարչական մասով ծախսը կազմել է 17518.4 հազ.դրամ,նախատեսված 20727.0 հազ.դրամի դիմաց,կատարվել է 84.5 տոկոսով: Ներկայացնենք բյուջեի ծախսերը՝ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման

1.Կառավարման ապարատի պահպանման համար ծախսվել է 14208.4 հազ. դրամ նախատեսված 16068.4 հազ.դրամի դիմաց.կատարման տոկոսը կազմել է 88.4 ,այդ թվում՝
- Կառավարման ապարատի աշխատողների աշխատավարձերի և աշխատավարձից պահված եկամտային հարկի վճարման համար նախատեսված 11998.4 հազ. դրամի դիմաց կատարվել է 11045.4 հազ.դրամով, կատարման տոկոսը կազմել է 92.1
- Բանկային ծառայությունների համար ծախսվել է 10.0 հազ. դրամ.
- Էներգետիկ ծառայությունների համար նախատեսված 550.0հազ. դրամի դիմաց ծախսվել է 402.4 հազ. դրամ.
- Կապի ծառայությունների համար՝550.0 հազ. դրամի դիմաց ծախսվել է 425.8 հազ. դրամ.
- Գործուղման համար ծախսվել է 76.8 հազ.դրամ,նախատեսված 250.0 հազ.դրամի դիմաց.
- Համակարգչային ծառայությունների համար՝100.8հազ.դրամ,նախատեսված 120.0 հազ. դրամի դիմաց.
- Տեղեկատվական ծառայությունների համար՝ 53.5 հազ. դրամ.
-Ներկայացուցչական ծախսերի կատարվել են 250.0 հազ. դրամով,300.0 հազ. դրամի դիմաց.
-Մեքենաների ,սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման համար նախատեսված է եղել 100.0 հազ.դրամ, ծախսվել է 39.5 հազ.դրամը.
-Գրասենյակային նյութեր և ապրանքների ձեռք բերման համար ծախսվել է նախատեսված 150.0 հազ.դրամը
-Տրանսպորտային նյութեր ձեռք բերելու համար ծախսվել է նախատեսված 1300,0հազ.դրամը.
-Կենցաղային նյութերի ձեռք բերելու համար ծախսվել է նախատեսված 150.0 հազ. դրամը.
-Հատուկ նպատակային այլ նյութերի համար ծախսվել է նախատեսված 200.0 հազ.դրամը.
-Պարտադիր վճարների համար նախատեսված 50.0 հազ.դրամի դիմաց ծախսվել է 6.0 հազ. դրամ:

2. Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների համար ծախսվել է 220.0 հազ դրամ,
3. Այլ մշակութային կազմակերպությունների համար (միջոցառումների անցկացում) ծախսվել է 670.0հազ.դրամ,
4. Նախակրթարանի համար՝ 678.0 հազ. դրամ.
5. Ջրամատակարարման համար՝ 740.0 հազ. դրամ.
6.Աղբահանության համար՝ 960.0 հազ.դրամ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԲԵԺԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Շամլուղ, (0253)60474, shamlugh@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 05-Ն

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Շամլուղ համայնքի 2016 թվականի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը, համաձայն՝ հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԱԲՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
4. ՇԱԽԿՅԱՆ ԱՆՈՒՇ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՆԴՐՈՒՇ ԲԵԺԱՆՅԱՆ

Հավելված
Շամլուղ համայնքի ավագանու
2017թ. փետրվարի 10-ի թիվ 05-Ն
որոշման

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համայնքի զարգացման ծրագրի շրջանակներում 2016թ. ընթացքում Շամլուղ համայնքում իրականացվել են մի շարք աշխատանքներ:

1.Համայնքում 2015 թվականից գործող նախակրթարանը ունի երկու աշխատող և ըստ պայմանագրի, ինչպես 2015 թվականին, 2016թվականին ևս համայնքապետարանի կողմից կատարվել է ներդրում: 2016 թվականի ընթացքում համայնքապետարանը նախակրթարանի համար ծախսել է 678.0 հազ. դրամ, այդ գումարը ծախսվել է դաստիարակի և դաստիարակի օգնականի վեց ամսվա աշխատավարձի վճարման համար:

2. 2016թ.ընթացքում համայնքի բազմաբնակարան շենքերի ջրագծերը փոխելու և նորոգելու համար համայնքապետարանը կատարել է իր ներդրումը, այս աշխատանքները շարունակական են և նախատեսվում են նաև հաջորդ տարիներին:

3. 2016թ.ընթացքում համայնքում սիստեմատիկ կատարվել է աղբահանություն, որն իրականացվել է ,,Շամլուղջուր,,ՍՊԸ-ի միջոցով:

4.2016 թվականի ընթացքում կատարվել է ներհամայնքային ճանապարհների և փողոցների ընթացիկ նորոգում և բարեկարգում, համայնքապետարանը կատարել է համապատասխան միջոցառումներ ձմռանը ներհամայնքային ճանապարհներում անվտանգ երթևեկությունն ապահովելու ուղղությամբ՝ ճանապարհներին սիստեմատիկ փռվել է հատիկավոր խարամ:

5. Համայնքապետարանը 2016թ.ընթացքում,համայնքում կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝
- Բանակի օրվան նվիրված տոնի կապակցությամբ, շնորհավորական բացիկներ է ուղարկել համայնքի զինծառայողներին
- Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառում,
- Սեպտեմբերի 1-ին՝ առաջին դասարանցիներին նվիրել է գրենական պիտույքների փաթեթ:

- Ամանորի և Սուրբ ծննդյան օրերին նվիրված միջոցառում՝ այդ կապակցությամբ համայնքի նախակրթարան հաճախող երեխաներին և մինչև դպրոցական հասակի երեխաներին համայնքապետարանի կողմից տրվել են Ամանորի նվերներ:

6. 2016թ. ընթացքում ժամանակին վճարվել է աշխատակազմի աշխատավարձերը, որի արդյունում աշխատավարձի պարքեր չկան:

Շամլուղ համայնքի ղեկավար Լ.Բեժանյան